ԳԼՈՒԽ ԻԲ.

Աղերսագիր Հայոց առ Սուլթան Մահմուտ Բ. Բէիզ Վահիտ Էֆէնտի։ Դատ Հայոց ընդ Յունաց 'ի Փաշա Գարուսին վասն Ս. Տեղեաց։ 'Ի 4 Նիսան։

ԻՍԿ 'ի Կոստանդինուպոլիս յետ անցանելոյ ամսօրեայ ժամանակի՝ եւ բանակն Օսմանեան 'ի դաշտն Տավուտ Փաշա կոչեցեալ՝ գնալ 'ի պատերազմ ընդդէմ Ռուսաց, և ամենայն աւագանին ընդ նմա, և 'ի տեղի նոցա անցին այլք։ Յայնժամ Հայք խորհրդով իշխանաւորաց ազգին մատուցին գիր աղաչանաց առ Արքայն Սուլթան Մահմուտ Բ. բազմութեամբ Վեղարաւորաց, Եպիսկոպոսաց, Վարդապետաց, Քահանայից և այլոց, որք էին արք իբրեւ 500, յաւուր Ուրբաթու յիւսկիւտար առաջի Այյազմայ մզկիթին։ Զկնի աւուրց ինչ կոչեաց առ ինքն Բէիզ Էմին Վահիտ Էֆէնտի զերկուս 'ի գլխաւորացն Հայոց խօսիլ ընդ նոսա և հարցանել և կամ սպառնալեօք ահացուցանել։ Գնացին առ նա 'ի Դուռն Պօղոս Եպիսկոպոս Առաջնորդ Պրուսայի, Պօղոս վարդապետ Փոխանորդ Երուսաղէմի, և այլ անձինք 4 'ի ժողովրդոց, ուր էին Պէյլիքճի և Մեքթուպճի Էֆէնտիք։ Հարցին ցնոսա և ասեն, զի՞նչ է այս յանդգնութիւն ձեր, զի առանց գիտութեան մերոյ գիր աղաչանաց մատուցանէք առ Արքայ, ձանձրացուցանէք զնա եւ զմեզ։ Յայնժամ Պօղոս վարդապետ յառաջ մատուցեալ սկսաւ պատմել մի առ մի զամենայն արարս Յունաց. ետ կոչել Բէիզն զԱտենական Թարգմանն (Տիվան Թէրճիմանի) ազգաւ Յոյն, յոր յուսացեալ էին ամենայն ազգայինք նորին, և ասէ ցնա՝ լուր զի՞նչ ասեն Հայք. և նորա պչուցեալ հայէր՝ և ոչ կարէր առնել պատասխանի ինչ։ Իսկ Պօղոս վարդապետ առաւել համարձակեալ 'ի բանս իւր՝ հաստատէր զանիրաւութիւնս Յունաց։ Եւ Պէյլիքճին որ 'ի կողմն Յունաց էր, ընդդէմ կացեալ բանիցն Պօղոսի՝ ահաբեկէր զնա. անկարելի է ասէր դիտումն ձեր՝ զի իրաւունքն Յունաց է, դուք ոչ գիր և ոչ արձանագրութիւն ունիք, և ոչ հրովարտակի հաւանիք. իսկ Պօղոս զհակառակն պընդ-